ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ
<<ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ

ք.Կապան, Ռ.Մելիքյան 8 /4 հեռ.(060) 751 525, kapankomunal@mail.ru

N 42

,,04,, 06 2026թ.

,,Ամուրա,, ՍՊԸ-ի տնօրեն

Լ. Հարությունյանին

(հասցե՝ ՀՀ ք. Երևան, Թումանյան 8,

էլ. հասցե՝ am.llc24@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(Պայմանագիրը միակողմանիլուծելու վերաբերյալ)

Հարգելի տիկին Լ. Հարությունյան

ՀՀ Սյունիքի մարզի ,,Կապան համայնքի կոմունալ ծառայություն,, ՀՈԱԿ-ի և Ձեր՝ ,,Ամուրա,, ՍՊԸ-ի միջև կնքված 21. 05. 2026թ. ,,ԿՀԿԾ-ԳՀԱՊՁԲ-26/09,, ծածկագրով պայմանագրի համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր)՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո (21.05.2026թ) մինչև 30. 06. 2026թ Ձեր կողմից պետք է մատակարարվեր 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ ,,Պլաստմասե աղբարկղ 1100լ,, որոնք պատվիրել ենք 01. 06. 2026թ. և Ձեր կողմից 03. 06. 2026թ. ուղարկվել է գրություն՝ լուծել ,, ԿՀԿԾ-ԳՀԱՊՁԲ-26/09,, ծածկագրով 21 մայիսի 2026թ կնքված պայմանագիրը, հրաժարվելով սահմանված ժամկետում իրականացնել Ապրանքի մատակարարումը :

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2. 1. 7 կետը, համաձայն ՀՀ ,,Գնումների մասին,, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի՝ ,,Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը,, 466-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ,,Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը

համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված,, ՀՀ Սյունիքի մարզի ,,Կապան համայնքի կոմունալ ծառայություն,, ՀՈԱԿ-ը միակողմանի լուծված է համարում Ձեզ հետ 21. 05. 2026թ. կնքված թիվ ,,ԿՀԿԾ-ԳՀԱՊՁԲ-26/09,, գնման պայմանագիրը՝ և առաջարկում եմ 10/տաս/ աշխատանքային օրվա ընթացքում ,,Կապան համայնքի կոմունալ ծառայություն,, ՀՈԱԿ-ի ԱՇԲ Կապանի մասնաճյուղ 2470804752770000 հաշվեհամարին վճարել պայմանագրի՝ 330000 ՀՀ դրամ և որակավորման՝ 495000 ՀՀ դրամ ապահովումները:

Սահմանված ժամկետում /սույն ծանուցագիրը ստանալուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում/ վճարելու դեպքում, Պատվիրատուն գրավոր ներկայացնում է լիազորված մարմին,որի հիման վրա մասնակիցը չի ներառվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, և դրանց կատարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը ներկայացնել Պատվիրատուին:

,,ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,,

ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ .
Գնումների համակարգող
Ալիդա Զախարյան
Հեռ. 098 052 558